

# ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը՝ ուսուցչի օրվա առթիվ

05.10.2023

Մի րեւի ուսուցիչներ, շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա առթիվ: Շարունակելով կրթության ոլորտում ազգային լավագույն ավանդույթները՝ ամենօրյա ազնիվ ու տքնաջան աշխատանքով դուք ձեր արժանի ավանդն եք ներդնում մեր պետության ապագա քաղաքացիների ձևավորման գործում:

Համոզված եմ, որ երիտասարդ սերնդի պատշաճ կրթության և դաստիարակության գործը հոգատար ու վստահելի ձեռքերում է:

Կրթական ոլորտի խնդիրները մշտապես գտնվում են կառավարության ուշադրության կենտրոնում և ամեն տարի դրանց լուծմանն ուղղված քայլերը՝ կրթական համակարգի բարեփոխումից, դպրոցների հիմնանորոգումից, ուսուցչի մասնագիտության նկատմամբ համընդհանուր ուշադրության և հոգածության մթնոլորտի ձևավորումից մինչև համակարգի աշխատողների աշխատավարձերի բարձրացում, կարծում եմ, նկատելի են և այսուհետ էլ հետևողականորեն շարունակվելու են:

Կրկին շնորհավորելով ձեզ այս գեղեցիկ տոնի առթիվ, առողջություն և հաջողություններ եմ մաղթում ձեզ՝ ձեր շնորհակալ և հայրենանվեր աշխատանքում: